ARM-NADO

2025

REPORT

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Prepared By:
Prof. Hovhannisyan

Edited By:
Gohar Sahakyan

armantidopingservice@outlook.com +37494282018 armnado.am

CONTENTS

ՀՀԳ-Ի ՈՒՂԵՐՁԸ	MESSAGE FROM THE WADA	3
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԹԻՄԸ	ARM-NADO TEAM	4
2025-Ը ԹՎԵՐՈՎ	2025 BY THE NUMBERS	6
ԿՐԹԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	EDUCATION INITIATIVES	8
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2025	STATISTICAL ANALYSIS 2025	12
ՆԿԱՐՆԵՐ	PHOTO GALLERY	13
ԿՐԹԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ ԸՍՏ ՄԱՐԶԱՁԵՎԵՐԻ	EDUCATION ACTIVITY BY SPORT DISCIPLINE AND TARGET GROUPS	14
ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ և ԴՈՊԻՆԳ ՍՏՈՒԳՄԱՆ ՍՊԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ	TESTING AND DCO OPERATIONS	17
ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ	MAJOR PARTNERS	20
ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ	CLIENT SERVICES	20
ԹՕԲ	TUE	22
ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	WHEREABOUTS	23
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ և ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ	RESULTS MANAGEMENT AND INVESTIGATIONS	24
2025 ԳԼԽԱՎՈՐ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ	2025 MAIN ACHIEVEMENTS	25

ՀՀԳ-Ի ՈՒՂԵՐՁԸ

«Հակադոպինգային Գործակալություն» ՊՈԱԿ-ի քրտնաջան աշխատանքի արդյունքում Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի հուլիսի 9-ին ստեղծվել է Հայաստանի անկախ «Հակադոպինգային Գործակալություն» ՊՈԱԿ-ը՝ Հայաստանում հակադոպինգային ծրագրերի իրականացման համար: Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի օգոստոսի 26-ի N 441 որոշմամբ «Հակադոպինգային Գործակալություն» ՊՈԱԿ-ի գործունեության առարկան Հայաստանի Հանրապետությունում հակադոպինգային ծրագրերի մշակումն ու իրականացումն է: Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը քրտնաջան աշխատեց և արեց հնարավոր ամեն ինչ, որպեսզի 2020 թվականի նոյեմբերի 3-ից Գործակալությունը սկսի գործել որպես անկախ կազմակերպություն՝ համաձայն ՀՀԳ օրենսգրքի:

Մինչ 2025 թվականը շարունակում էր մարտահրավերներ ներկայացնել աշխարհի և համաշխարհային սպորտային շարժման համար, մենք մնացինք անսասան մեր հանձնառության մեջ՝ ստեղծելու մի իրականություն, որտեղ մարզիկները կարող են լավ մրցել ինչպես ֆիզիկապես, այնպես էլ մտավոր, մրցակցության ցանկացած մակարդակում:

Շնորհակալություն ենք հայտնում գործակալության նոր ղեկավարությանը և աջակիցներին, ովքեր մեր կողքին քայլում են արդար, անվտանգ և մաքուր սպորտի համար պայքարում:

WADA հիմնադրամի խորհրդի անդամ
Կարեն Գիլոյան

MESSAGE FROM THE WADA

After an extremely difficult year as a result of the hard work of the administration of Department of Anti-Doping Service, the independent Armenian Anti-Doping Agency has been established in the Republic of Armenia on July 9, 2020 for implementation of the Anti-Doping Programs in the Republic of Armenia. By the decision N 441 of the Government of the Republic of Armenia on August 26, 2020 the subject of the ARM-NADO's activity is the development and implementation of anti-doping programs in the Republic of Armenia. The Ministry of Education, Science, Culture and Sport worked hard and did everything possible so that from November 3, 2020, the Agency began to function as an organization for which independent operational activities are provided in accordance with the WADA Code.

While 2025 continued to present challenges for the world and the global sport movement, we remained

steadfast in our commitment to create a reality where athletes can compete well, both physically and mentally, at any level of competition.

We thank new administration of the Agency and supporters who walk beside us in the fight for fair, safe, and clean sport.

WADA Foundation Board Member

Karen Giloyan

ARM-NADO TEAM

ՏՆՕՐԵՆ/ DIRECTOR

Dr. Davit Mosinyan, MD

ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

Տնօրինությունը բաղկացած է փորձառու անհատներից, ովքեր կիսում են «Հակադոպինգային Գործակալություն» ՊՈԱԿ-ի տեսլականի, առաքելության և հիմնական արժեքների հիմքում ընկած իդեալներն ու սկզբունքները: Տնօրինությունը խորհուրդ է տալիս և աջակցում անձնակազմին կազմակերպության աշխատանքի կատարման հարցում հավասարակշռված և բազմազան հեռանկարներով:

DIRECTORS

The Directors is comprised of experienced individuals who share the ideals and principles behind ARM-NADO's vision, mission, and core values. The Directors advise and support the staff in executing the work of the organization through balanced and diverse perspectives.

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/ LEADERSHIP

Prof. Areg Hovhannisyan, PhD

ՓՈԽՏՆՕՐԵՆ

Հիմնվելով «Հակադոպինգային Գործակալություն» ՊՈԱԿ-ի կանոնադրության վրա՝ գործակալության փոխտնօրենը պատասխանատու է Հայաստանում հակադոպինգային ծրագրերի իրականացման համապարփակ և անկախ հակադոպինգային ծրագրերի կառավարման և համակարգման համար:

«Հակադոպինգային Գործակալություն» ՊՈԱԿ-ի հիմնական նախաձեռնությունները ներառում են.

• Հակադոպինգային կրթություն
• Թեստավորման ծրագրեր
• Գիտական, հետազոտական նախագծեր

«Հակադոպինգային Գործակալություն» ՊՈԱԿ-ի նվիրված և տաղանդավոր թիմը բաղկացած է 12 անդամներից և դոպինգ ստուգման սպաներից և ղեկավարներից, ովքեր համագործակցում են՝ իրականացնելու կազմակերպության առաքելությունը:

DEPUTY DIRECTOR

Based in ARM-NADO Charter, Deputy Director of Agency is responsible for managing and coordinating comprehensive and independent anti-doping programs for the implementation the Anti-Doping Programs in Armenia

ARM-NADO's key initiatives include:

- Anti-doping education
- Testing programs
- Science, research projects

ARM-NADO's dedicated and talented team is comprised of 12 home-office team members and field-based Doping Control Officers and Chaperons who work collaboratively to realize the organization's mission to.

ԳՈՐԾԱԴԻՐ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/ EXECUTIVE LEARDERSHIP

Anzela Sahakyan

Head of testing Department, IDCO/BCO

Անժելա Սահակյան

Դոպինգ թեստավորման բաժնի պետ

Դոպինգ ստուգման սպա

Dr. Karen Stepanyan

Head of Education Department,

WADA Education Officer

Կարեն Ստեփանյան

Կրթական բաժնի պետ

ՀՀԳ Կրթության սպա

Gohar Sahakyan

Head of Results Management Department, IDCO

Գոհար Սահակյան

Արդյունքների կառավարման բաժնի պետ , IDCO

ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ/ SENIOR LEADERSHIP

Ara Martirosyan
Intelligence and Investigation Officer
Արա Մարտիրոսյան

Հետախուզության և Հետաքննության Պատասխանատու

Levon Hovhannisyan
Head of Chaperons Team

Լևոն Հովհաննիսյան

Շապերոնների Խմբի ղեկավար

Roza Hovhannisyan
Դոպինգ Ստուգման Սպաների

Ռոզա Հովհաննիսյան
Lead DCO/BCO

2025-ը ԹՎԵՐՈՎ
2025 by THE NUMBERS

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

921

Մարզիկների, մարզիչների ուսանողների, ծնողների, բժշկական անձնակազմի և դպրոցականների թիվը որոնք մասնակցել են, կրթական սեմինարների :

40

կրթական դասընթացներ և սեմինարներ

2 կրթական վիկտորինաներ

անցկացվեց ՀՀԳ «Մրցիր ազնիվ» հարցաշարը հավաքների ժամանակ

1 կրթական վիկտորինա

Միջազգային իրադարձությունում անցկացվեց ՀՀԳ «Մրցիր ազնիվ» հարցաշարը Սամբոյի աշխարհի գավաթ՝ 44 մասնակիրից

Կրթության տեսակը

Օֆլայն– 921

Facebook-ի միջոցով և

Կայքի միջոցով- 1524

EDUCATION SESSIONS

921

Number of athletes, coaches, students, parents, medical staff, and schoolchildren who participated through seminars, workshops, educational sessions.

40

FACE-TO-FACE Education Sessions CompletedƵ

2 Awareness campaign with WADA “Play True” Quiz at training camp

1 WADA Play True Quiz completed at International event: Sambo world Cup 44 participants

Education Type

Face to Face – 921

Via Facebook and

Website- 1524

ԴՈՊԻՆԳ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ
201 ԹԵՍՏԱՎՈՐՎԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐ

2024 թվականից թեստավորման 6% աճ

314 նմուշառում
2024 թ համեմատ Նմուշառման
15% աճ
454 լաբորատոր վերլուծություն
2024 թ համեմատ լաբորատոր վերլուծություն քանակի 10% աճ

4 ՈՐԱԿԱԶՐԿՈՒՄՆԵՐ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ
4 մարզիկ ստացել են զգուշացում
0 Հայ մարզիկների Որակազրկումներ 2025 Միջազգային իրադարձություններում

TESTING SESSION
201 ATHLETES TESTED

6% increase in testing from 2024

314 *tests*
15% increase in testing from 2024

412 LABORATORY ANALYSIS
10%

4 SANCTIONS announced in 2025
0 SANCTIONS of Armenian Athletes at International Event announced in 2025

ԿՐԹԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
EDUCATION INITIATIVES

ԿՐԹԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրթությունը կարևոր է դոպինգի կանխարգելման համար, այդ իսկ պատճառով «Հակադոպինգային Գործակալություն» ՊՈԱԿ-ը ամեն տարի կրթում է հազարավոր մարզիկների, մարզիչների, բժշկական անձնակազմին և մարզիկներին աջակցող անձնակազմին: Երևանում և Հայաստանի մարզերում, ինչպես նաև բազմաթիվ այլ ռեսուրսների միջոցով «Հակադոպինգային Գործակալություն» ՊՈԱԿ-ը(ARM-NADO) ապահովում է, որ մարզիկները և աջակցող անձնակազմը ունենան անհրաժեշտ միջոցները հակադոպինգային կանոններին ու իրենց պարտականություններին հետևելու համար՝ միաժամանակ հասկանալով նրանց դերը՝ սպորտը մաքուր պահելու գործում:
Բոլոր հայ մարզիկների 31%-ը մասնակցել են կրթության դեմ առ դեմ և էլեկտրոնային ուսուցման դասընթացներին:

Մասնակիցները լրացրել են 144 հարցաթերթիկ:

EDUCATION INITIATIVES

Education is key to doping prevention, which is why ARM-NADO provides education to thousands of athletes, coaches, trainers, medical staff, and other athlete support personnel each year. Through in person education in Yerevan and Armenian regions, as well as a multitude of other resources, ARM-NADO helps to ensure that athletes and support personnel have the tools they need to navigate anti-doping rules and responsibilities, while also understanding the role they play in keeping sport clean.

In 2025 31% of all Armenian athletes and Athletes support personals take the Education face-to-face and e-learning courses

144 surveys for in-person education completed

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գլխավոր հաջողությունները

Մեր կայքում, ինչպես նաև սմարթֆոնների (Android) և iPhone (Apple) համար արգելված նյութերի որոնման համար նախատեսված բջջային հավելվածի նոր թարմացում:

E-LEARNING EDUCATION INITIATIVES

Major success

New update of a Mobile application for recognition of prohibited substances on our Website and for Smartphones (Android) and iPhone (Apple).

Մեր կայքում մարզիկների և մարզիկներին աջակցող անձնակազմի համար կրթական և տեղեկատվական նյութերի նոր թարմացում հայերեն և անգլերեն լեզվով:

2025 թվականին ARM-NADO-ն ավարտեց հայերեն թարգմանության գործընթացը, և ADEL-ը հասանելի դարձավ միջազգային մակարդակի մարզիկների համար՝ հայերեն լեզվով:

Հաշվի առնելով այս փաստը և նախորդ տարվա փորձը, ARM-NADO-ն որոշում կայացրեց անցկացնել ուսուցողական և կրթական սեմինարներ Հայաստանի մարզերում բնակվող և աշխատող մարզիկների, և մարզիչների և աջակցող անձնակազմի համար, որոնք դեռևս տեղեկացված չէին դոպինգի դեմ պայքարի վերաբերյալ:

Իրազեկման արշավի ծրագրում ներառված հիմնական և հիմնարար կետերը.

1. Տարածաշրջանային սպորտային ադմինիստրատորների, մարզիկների, մարզիչների, մարզիկների աջակցության անձնակազմի ծանոթացում ADEL հարթակին և միջազգային մակարդակի մարզիկների համար ADEL-ի հայերեն տարբերակի օգտագործման մեթոդաբանությանը:
2. Արգելված նյութերի և մեթոդների 2025 թվականի ցուցակի, չարգելված դեղերի 2025 թվականի ցանկի ներկայացում և ARM-NADO թարմացված կայքի հետ ծանոթացում:
3. Երիտասարդ մարզիկների համար դոպինգ-ստուգման /թեստավորման/ ընթացակարգի, այդ թվում՝ թեստավորման ընթացքում նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ դասընթացների անցկացում:
4. Սպորտի արժեքների վրա հիմնված կրթություն: Իրազեկության բարձրացում: Տեղեկատվության տրամադրում:

New update of Education Materials for athletes and Athletes support personals on our Website

In 2025 Armenian National Anti-Doping Organization (ARM-NADO) finished the process of translation to Armenian and the ADEL was available for international level athletes, in Armenian.

Taking this fact into account and the experience of previous year, ARM-NADO made a decision to conduct training and educational seminars for majority of athletes and athlete support personnel living and working in the regions of Armenia that remain uneducated on anti-doping.

The main and fundamental points that were included in an Awareness following campaign program:

1. Familiarization of regional sport administrators, athletes, coaches, athlete support personnel with the ADEL platform and methodology of using ADEL Armenian version for international level athletes.

2. Introducing the 2025 List of prohibited substances and methods, 2025 List of non-prohibited medications and familiarization with the ARM-NADO website,

3. Conducting training for young athletes about the doping control testing procedure, including their rights and responsibilities during testing.

4. Values-based education. Awareness raising. Information provision. Anti-doping education for schoolchildren.

After the application is created and tested by ARM-NADO specialists, the NOC organized 3 awareness

Հակադոպինգային կրթություն դպրոցականների համար:

Հավելվածի ստեղծումից և ARM-NADO-ի մասնագետների կողմից փորձարկումից հետո, ՀԱՕԿ-ը կազմակերպել (2025 թվականի սեպտեմբերի 15-20) է 3 իրազեկման սեմինարներ Երևանում, Գումրիում, Արթիկում և Վանաձորում մարզիկների և դպրոցականների համար: Այս սեմինարների մասնակիցների ընդհանուր թիվը կազմել է 58 մասնակից:
Սեմինարների ժամանակ ARM-NADO-ի փորձագետները մարզիկներին բացատրել են հավելվածի օգտագործման սկզբունքները, և անցկացվել են գործնական սեմինարներ, որի ժամանակ քննարկվել են նաև ոչ ստանդարտ դեպքերի լուծումները: Հավելվածների օգտագործման հրահանգները ներկայացվել են նաև ARM-NADO կայքում և Facebook-ի էջերում: Սեմինարի ավարտին մարզիկներին տրվել են հավելվածի արդյունավետության գնահատման համար հարցաթերթիկներ: Հարցման մասնակիցների 100%-ը բարձր գնահատեցին կատարված աշխատանքը և գոհ մնացին հավելվածի բովանդակությունից, օգտագործման հեշտությունից և դիզայնից:
Սեմինարների առաջին օրը սեմինարներին մասնակցեցին 20 էլիտար մարզիկներ և մարզիկների աջակցության անձնակազմի 10 ներկայացուցիչ:
Երկրորդ օրը սեմինարներին մասնակցեցին 20 երիտասարդ մարզիկների (16-17 տարեկան) և 30 դպրոցականներ (13-15 տարեկան) :
Արթիկում, Գումրիում, և Վանաձորում և Երևանում անցկացված սեմինարներին մասնակցել է նաև անվանի մարզիկ, ՀԱՕԿ ներկայացուցիչ, ծանրամարտի աշխահի արաջնությունների բազմակի մեդալակիր և Եվրոպայի չեմպիոն Խուրշուդյան Հռիփսիմեն, ով պատասխանել է սեմինարի մասնակիցների բազմաթիվ հարցերին մաքուր սպորտի կարևորության վերաբերյալ:

seminars in Yerevan, Gyumri, Artik and Vanadzor for regional athletes and school children. The total number of participants at these seminar (September 15-20, 2025) was 58 participants.

At the seminars the ARM-NADO experts explained to athletes the principles of using the mobile application and the ADEL platform. A practical workshop was also held, which also included some individual cases. The instruction of the use of the application was also presented on ARM-NADO websites and Facebook pages. At the end of the workshop, the athletes were receiving the final questionnaires for the evaluation of the effectives of the application. 100% survey participants highly appreciated the work done and were satisfied with the content, ease of use and design of the application.

The first day of each campaign included seminars for 20 elite athletes in the region and 10 athlete support personnel.

The second day included seminars for 20 young athletes (16-17 years old) and 20 schoolchildren (13-15 years old).

The seminars held in Artik, Gyumri and Yerevan were also attended by renowned athlete, NOC representative, multiple medalist and European champion in weightlifting, Khurshudyan Hripsime, who answered numerous questions from seminar participants about the importance of clean sport.

Իրականացված սեմինարների գլխավոր արդյունք հանդիսացավ հետևյալը.

Արգելված նյութերի և մեթոդների ցուցակին և չարգելված դեղերի ցանկի վերաբերյալ գիտելիքների բարձրացում, որը թույլ կտա մարզիկներին տեղեկացված լինել, իսկ բժիշկներին՝ խուսափել մարզիկների բուժման ժամանակ պատահական սխալներից:

Աղտոտված և նոր կենսաբանական ակտիվ հավելումների վերաբերյալ տեղեկատվության բարձրացումը թույլ կտա մարզիկներին, բժիշկներին և մարզիչներին ճիշտ ընտրություն կատարել մարզումների ընթացքում վերականգնողական ռազմավարություններ ընտրելիս:

ADEL, ARM-NADO կայքերի թվային նյութերի և բջջային հավելվածների օգտագործման վերաբերյալ գիտելիքների բարձրացում:

The main results of the seminars conducted were the following:

Increasing knowledge of the List of prohibited substances and methods and List of non-prohibited medications that will allow athletes to be informed and doctors to avoid accidental mistakes in their treatment of athletes.

Increasing information about contaminated and new biologically active supplements will allow athletes, doctors and coach to make the right choice when assigning recovery strategies in the process of training.

Increasing knowledge of the use the ADEL, ARM-NADO website digital materials use and mobile application use be informed and doctors to avoid accidental mistakes in their treatment of athletes.

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2025
STATISTICAL ANALYSIS 2025
Թիրախային խումբեր/ Target group
IN-PERSON WORKSHOPS/ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

Ընդամենը -**921 մասնակից**
Total Number of participants -921

Table 1.*Թիրախային խումբեր* /Target group in detail

Թիրախային խումբ	*Քանակ*		Number of participants
Երեխաներ՝ 12-16 տարեկան մարզիկներ	92	12–16-Year-Old Athletes	92
Երիտասարդ՝ 16-19 տարեկան մարզիկներ	178	16–19-Year-Old Athletes	178
Տաղանդավոր երիտասարդ մարզիկներ	19	Talented Young Athletes	19
Ազգային մակարդակի մարզիկներ	168	National Level Athletes	168
Միջազգային մակարդակի մարզիկներ	62	International Level Athletes	62
ԳԹՓ մարզիկներ	33	RTP Athletes	33
ԹՓ մարզիկներ	82	TP Athletes	82
Ուսանողներ	83	Students	83
Բժշկական անձնակազմ	28	Medical Staff	28
Մարզիկներին աջակցող անձնակազմ անձնակազմ /այդ թվում Մարզիչներ Ծնողներ,սպորտային բժիշկներ/	176	Athletes Support Personals /Coaches, Parents, Sport doctor/	176
Ընդամենը	921	Total	921

2025 “Play True” Quiz at World Sambo Championship.

Total number of participants – 44 athletes and coaches
«Մրցիր ազնիվ» հարցաշարը սամբոյի պատանիների պատանի կադետների աշխարհի առաջնությունում:
Մասնակիցների քանակը 44 մարզիկ և մարզիչներ

PHOTO GALLERY
More photos are available on our official Facebook page

Table 2. Կրթական սեմինարներ ըստ մարզաձևերի/Education activity by Sport discipline and Target groups

Date/Ամսաթիվ	Target group/Թիրախային խումբ	Athletes/ Մարզիկներ	Coaches/ Մարզիչներ	Parents/ Ծնողներ	ASP /ՄԱԱ	Students /Ուսանողներ
23.01.2025	Wresting and weightlifting RTP athletes and ASPs	15	1	-	2	-
24.01.2025	Boxing, gymnastic, Shooting, Cycling, Athletics, Powerlifting RTP athletes	18	2	-	2	-
31.01.2025	Wresting and weightlifting TP athletes and ASPs	23	2	-	2	-
31.01.2025	Para-athletics, Sambo, Judo, Weightlifting RTP athletes	23	3	-	2	-
06.02.2025	Para-athletics, Sambo, Judo, Weightlifting TP athletes	26	4	2	2	-
19.02.2025	Students of Yerevan State Physical culture Institute	-	-	-	-	25
20.02.2025	Students of Coach Faculty	-	-	-	-	23
24.03.2025	Students of the French language department	-	-	-	-	18
03.04.2025	Students of the French language department	-	-	-	-	17
08.04.2025	Para-Olympic athletes and ASP (Para-athletics, para-, Weightlifting, para-table tennis, para-powerlifting)	17	5	1	-	-
21.05.2025	Football National team doctors	-	-	-	9	-
25.05.2025	Young athletes form U21 Men Football National Team	21	-	-	2	-
02.06.2025	Young athletes form U21 Men National Team	22	-	-	5	-
05.06.2025	Sambo World Cup Play Trues Quiz	40	-	-	5	-
08.06.2025	Sambo international level Athletes and ASP	40	-	-	4	-

16.06.2025	Weightlifting U20 National Women Team Athletes and ASP	40	-	-	4	-
17.06.2025	Weightlifting U18 National Men Team Athletes and ASP	14	-	1	2	-
18.06.2025	Children of Yerevan Football academy (U14-U15) and parents	28	-	5	2	-
23.06.2025	Children of Armavir Football academy (U14-U15) and parents	39	-	-	5	-
24.06.2025	Children of Sardarapat Football academy (U13-U15)and parents	40	-	1	4	
05.08.2025	Medical staff od FC and National Football Teams	-	-	-	53	-
03.09.2025	U21 National football Team men squad	24	-	-	3	-
10.09.2025	U19 National Football Team men squad	21	-	-	1	-
15.09.2005	Gyumri National and international level Athletes and ASP	16	-	-	3	-
15.09.2005	Artik Basketball Sport school U15 athletes and ASP	14	-	-	6	-
18.09.2005	Vanadzor National and international level Athletes and ASP	16	-	-	3	-
30.09.2025	Boxing, National Teams coaches and medical staff	12			3	
30.09.2025	Swimming National Teams coaches and medical staff				9	
30.09.2025	Cycling National Teams coaches and medical staff				16	
30.09.2025	Powerlifting National Teams athletes coaches and medical staff	5			12	

22.10.2025	U17 National Football Team men squad	22			1	
10.11.2025	U18 National Football Team men squad	23			1	
11.11.2025	U19 National Football Team Women squad	22			1	
12.11.2025	National Football Team Women squad	21			1	
22.12.2025	Powerlifting National Team	14			5	
22.12.2025	U23 Powerlifting National Team	18		1	6	
Total		**634**	**17**	**11**	**176**	**83**

ASP/ՄԱԱ – Athletes Support Personals/ Մարզիկներին աջակցող անձնակազմ

Total participant 921

Table 3. Կրթական սեմինարներ ըստ Մարզաձևերի/Education activity for athletes only by Sport Discipline

Sport Discipline/Մարզաձև	**Iinternational level Athletes/ՄՄՄ**	**National level Athletes/ԱՄՄ**	**Total**
Wrestling/Ընբշամարտ	26	30	56
Boxing/ Բռնցքամարտ	10	10	20
Weightlifting/ Ծանրամարտ	20	51	71
Gymnastic / Մանրամարզություն	7	6	13
Shooting/Հրաձգություն	8	15	23
Athletic/Աթլետիկա	8	14	22
Cycling/ Հեծանվասպորտ	8	29	37
Aquatics/Լող	4	4	8
Powerlifting/Եռամարտ	23	14	37
Football/Ֆուտբոլ	23	237	260
Sambo/Սամբո	40	33	73
Basketball/Բասկետբոլ		14	14
Total/Ընհանուր			**634**

2. ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ/TESTING

2025 TESTING NUMBERS BY SPORT

2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՐԱԾ ԹԵՍՏԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԸՍՏ ՄԱՐԶԱՁԵՎԵՐԻ

Table 4. 2025 URINE TESTS BY SPORT/DISCIPLINE

2025 ՄԵԶԻ ԹԵՍՏԵՐ ԸՍՏ ՄԱՐԶԱՁԵՎԵՐԻ

Sport/Discipline/ Մարզաձև	OOC Արտամրցումային	IC Մրցումային
Weightlifting/ Ծանրամարտ	40	16
Wrestling/ Ըմբշամարտ	47	12
Boxing/ Բոնցքամարտ	31	17
Cycling/ Track Endurance/ Հեծանվային սպորտ	14	6
Sambo/ Սամբո	2	4
Athletics/Jumps/ Աթլետիկա/Թռիչք երկարություն	3	4
Athletics/ Middle Distance 800-1500m/ Աթլետիկա/ Վազք 800-1500մ	3	2
Athletics/ Sprint 400m or less/ Աթլետիկա/ Սպրինտ 100-400մմ	3	2
Powerlifting/ Ուժային եռամարտ	10	10
Gymnastic/Artistic / Մարմնամարզություն	9	4
Judo/ Ջյուդո	2	4
Shooting/ Հրաձգություն	10	4
Football/ Ֆուտբոլ	-	16
Skiing/Cross-Country/ Դահուկավազք	4	-
Skiing/Alpine skiing / Լեռնադահուկային	2	-
Para-Cross Country/ Պարա- Դահուկավազք	1	-
Para-Powerlifting/ Պարա-Ուժային եռամարտ	1	2
Arm-Wrestling/ Para-Arm Wrestling/ Պարա-բազկամարտ	1	-
Karate/ Կարատե	-	5
Bodybuilding/Natural Bodybuilding-ABCD / Բոդիբիլդինգ	-	5
Total/ Ընդամենը	**183**	**113**

Table 5. 2025 ԱՐՅԱՆ ԹԵՍՏԵՐ ԸՍՏ ՄԱՐԶԱՁԵՎԵՐԻ
2025 BLOOD TESTS BY SPORT/DISCIPLINE

Sport/Discipline/ Մարզաձև	OOC Արտամրցումային		IC Մրցումային
Boxing/ Բոնցքամարտ	8		-
Wrestling/ Ըմբշամարտ	9		-
Weightlifting/ Ծանրամարտ	6		-
Cycling/ Track Endurance/ Հեծանվային սպորտ	8		-
Athletics/ Middle Distance 800-1500m/ Աթլետիկա/ Վազք 800-1500մ	3		-
Gymnastics /Artistic/ Մարմնամարզություն	1		-
Judo/ Ձյուդո	1		-
Powerlifting/ Ուժային եռամարտ	6		-
Skiing/ Cross-Country/ Դահուկավազք	4		-
Sambo/ Սամբո	1		-
Para-Cross Country/ Պարա- Դահուկավազք	1		-
Para-Powerlifting/ Պարա-Ուժային եռամարտ	1		-
Total/ Ընդամենը	**49**		

Total number of tests (urine and blood)- 345

Նմուշառումների ընդհանուր քանակը (մեզ և արյուն)-345

Increase vs 2024 24%

Table 6. 2025 ԳԹՓ-ՈՒՄ ԸՆԳՐԿՎԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ և ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔԱՆԱԿԸ
2025 RTP ATHLETES LIST AND NUMBER OF TESTS

RTP athletes/ ԳԹՓ Մարզիկներ	Number/ Նմուշառումների թիվը	Urine/ Մեզ	Blood/ Արյուն
Wrestling / Ըմբշամարտ	9	27	9
Weightlifting / Ծանրամարտ	7	21	6
Boxing/ Բոնցքամարտ	7	20	8
Shooting/ Հրաձգություն	2	6	-
Cycling/ Հեծանվավազք	2	7	6
Athletics/ Աթլետիկա	2	6	3
Gymnastic/ Մարմնամարզություն	2	6	1
Powerlifting/ Ուժային եռամարտ	2	6	2
Total/ Ընդամենը	**33**	**99**	**35**

Table 7. 2025 ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ
2025 TESTING NUMBERS IN INTERNATIONAL EVENTS

Event / Միջոցառում	Total/ Ընդամենը	Urine/ Մեզ	Blood/ Արյուն
Karate/ Կարատե	5	5	-
Bodybuilding/Natural Bodybuilding-ABCD/ Բոդիբիլդինգ	5	5	-
Athletics/ Jumps/ Աթլետիկա/Թռիչք երկարություն	2	2	-
Total/ Ընդամենը	**12**	**12**	**-**

ԴՈՊԻՆԳ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԴՈՊԻՆԳ ՍՏՈՒԳՄԱՆ ՍՊԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Թեստավորումը «Հակադոպինգային Գործակալություն» ՊՈԱԿ-ի՝ դոպինգ հայտնաբերելու և հակադոպինգային կանոնները խախտողներին պատասխանատվության ենթարկելու կարողության անբաժանելի մասն է: Ե՛վ մրցումային, և՛ առանց նախնական ծանուցման արտամրցումային թեստավորումը արդյունավետ հակադոպինգային ծրագրի մի մասն է, որը պաշտպանում է մաքուր մարզիկների իրավունքները և հավասար մրցունակությունը:

2025 թվականին «Հակադոպինգային Գործակալություն» ՊՈԱԿ-ը շարունակեց թեստավորում անցկացնել ոչ օլիմպիական մարզաձևերում թիմային մարզաձևերում և թեստավորվեցին 23 մարզիկ:

TESTING AND DCO OPERATIONS

Testing is an integral part of ARM-NADO's ability to detect doping and hold accountable those who violate anti-doping rules. Both in-competition (IC) and no advance-notice out-of-competition (OOC) testing are part of an effective anti-doping program that protects clean athletes' rights and a level playing field.

In 2025, ARM-NADO the IC and OOC testing program for non-Olympic sport discipline 23 athletes were tested .

MAJOR PARTNERS in Testing / ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ
«Հակադոպինգային Գործակալություն» ՊՈԱԿ-ի գլխավոր գործընկերները Միջազգային Թեստավորման Գործակալությունն է և Միջազգային Ֆեդերացիաները
The major partners of ARM-NADO are the International Testing Agency, and International Federations.

2025 TESTING (ITA Mission Order, IC tests)

Table 8. 2025 TESTING NUMBERS IN INTERNATIONAL EVENTS
2025 ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

Event/ Միջոցառում	Total/ Ընդամենը	Urine/ Մեզ	Blood/ Արյուն
Boxing /Բոնցքամարտ	26	26	-
Sambo / Սամբո	14	14	-
Total/ Ընդամենը	**40**	**40**	**-**

2025 CLIENT SERVICES DCO OPERATIONS

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴՈՊԻՆԳ ՍՏՈՒԳՄԱՆ ՍՊԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔ

«Հակադոպինգային Գործակալություն» ՊՈԱԿ-ի գլխավոր գործընկերները Միջազգային Թեստավորման Գործակալությունն է և Միջազգային Ֆեդերացիաները

40

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԵՍՏԵՐԻ ՔԱՆԱԿ

2024թ-ի համեմատ թեստերի քանակը պակասել է 18%-ով

CLIENT SERVICES DCO OPERATIONS

The major partner of ARM-NADO is the International Testing Agency, and International Federations.

40

TOTAL OOC TEST SESSIONS

18% decrease in testing from 2024

CLIENT SERVICES IN NUMBERS (ITA Mission Order)

Table 9. 2025 OOC TESTING NUMBERS
2025 ԱՐՏԱՄՐՑՈՒՄԱՅԻՆ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ

ITA RTP athletes/ ՄԹԳ ԳԹՓ մարզիկներ	Number/ մարզիկների թիվը	Urine/ Մեզ	Blood/ Արյուն
Weightlifting/ Ծանրամարտ	12	12	7
Gymnastic/ Մարմնամարզություն	4	4	-
Boxing/ Բոնցքամարտ	9	9	-
Skating / Speed Skating greater than 1500m/ Չմշկասահք / արագընթաց չմշկասահք 1500 մ-ից ավելի	3	3	3
Total/ Ընդամենը	**28**	**28**	**10**

Ընդամենը 66 նմուշառում

ԹԵՐԱՊԵՎՏԻԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆ
THERAPEUTIC USE EXEMPTIONS

ԹԵՐԱՊԵՎՏԻԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆ

«Հակադոպինգային Գործակալություն» ՊՈԱԿ-ը ընդունում է, որ մարզիկները, ինչպես բոլոր մարդիկ, կարող են ունենալ հիվանդություններ, որոնք պահանջում են բուժում որոշակի դեղերով կամ նրանք կարող են ենթարկվել բժշկական պրոցեդուրաների: Եթե այդ բուժման համար նախատեսված նյութը կամ մեթոդը արգելված է Համաշխարհային Հակադոպինգային Գործակալության (ՀՀԳ) արգելված ցուցակով, մարզիկները կարող են դիմել թերապևտիկ օգտագործման բացառության համար (ԹՕԲ): ԹՕԲ ստանալու դեպքում թույլատրվում է օգտագործել արգելված նյութը կամ մեթոդը սպորտում որոշակի ժամանակահատվածում: Բոլոր ԹՕԲ-երը գնահատվում են բժիշկ-փորձագետներից կազմված ԹՕԲ-ի անկախ կոմիտեի կողմից՝ համաձայն ԹՕԲ քաղաքականությամբ, և ենթակա են ՀՀԳ-ի պարտադիր մոնիտորինգի՝ համապատասխանության համար:

ԹԵՐԱՊԵՎՏԻԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարզիկների կողմից սեզոնային և այլ հիվանդությունների բուժման այլընտրանքային չարգելված դեղերի որոնումը հեշտացնելու նպատակով «Հակադոպինգային Գործակալություն» ՊՈԱԿ-ը 2018 թվականից սկսած ամեն տարի հրապարակում և թարմացնում է «Սպորտում թույլատրված դեղերի ցանկը»:

